ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Տնօրենի հավակնորդ՝ *Նունե Ասատրյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
3. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
4. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
   ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
5. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
8. ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
   ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ
9. ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ
10. ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
11. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԻ
    ԲԱՐՁՐԱՑՈՒՄ
12. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ
13. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ
14. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ,
    ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Դպրոցը կառուցվել է 1974 թվականին համայնքի տարածքում: Դպրոցը տիպային շենք է, նախագծային հզորությունը՝ 240 տեղ: Շենքի շինության տեսակը՝ երկաթբետոնյա և քարային, հարկայնությունը՝ երկու, ընդհանուր մակերեսը՝ 1029 քառակուսի մետր, ջեռուցման տեսակը՝ էլեկտրական սալիկներով: Դպրոցին հատկացված հողամասի մակերեսը՝ 1,3 հա:

2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2010 թվականին:

Դպրոցում սովորում է 54 աշակերտ: Աշխատողների թիվը՝ 26, որից ուսուցիչները և վարչական աշխատողները՝ 20: Աշխատանքային ռեժիմը՝ միահերթ:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Կառավարության:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական վարպետությունը և հմտությունները, արդիականացնել կրթության բովանդակությունը:

Դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԴԶԾ) հանրակրթական ուսումնական հաստատության հիմնական ռազմավարական փաստաթուղթն է: ԴԶԾ-ն պլանավորում է աշխատանքը դպրոցում: ԴԶԾ-ն դպրոցի 5-ամյա գործունեության հեռապատկերն է: Այն իր մեջ ներառում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ ամրագրված կառուցվածքային, բովանդակային օրենսդրական պահանջները:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի գործունեությունը կազմակերպվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և նորմատիվ այլ փաստաթղթերի համապատասխան: Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական ունակությունների զարգացումն է, բանիմաց, ազգանվեր, հայրենասեր, համամարդկային արժեքներով օժտված մարդ կերտելն է:

Առաջնորդվելով սահմանված նպատակներով և անձի շարունակական զարգացման սկզբունքով՝ Դաշտադեմի Գ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցը կվարի առաջանցիկ կրթական քաղաքականություն և առաջիկա հինգ տարում կհասնի զգալի արդյունքների՝ պահպանելով ներքոհիշյալ կանոնները.

1. Յուրաքանչյուր օրվա, շաբաթվա, ամսվա սկզբին իրազեկել նորությունների՝ առարկայական նամակներ, ցուցումներ:

2. Կատարել աշխատանքի բաժանում և բաշխում դպրոցի տնօրինության, մանկավարժների և մյուս աշխատողների միջև:

Կազմել և հաստատել դպրոցի մանկխորհրդում ուսումնական պլանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, ներքին կարգապահական կանոնները՝ հստակ տարանջատելով յուրաքանչյուր աշխատողի իրավունքներն ու պարտականությունները:

3. Ստեղծել պայմաններ՝ մեթոդական անկյուն, սեմինարներ մանկավարժների ընդհանուր զարգացվածության մեթոդական մակարդակի բարձրացման համար: Տանել աշխատանք մանկավարժների հետ ուսուցման նորագույն մեթոդները և դասերը նոր ձևով կազմակերպելու համար: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրմամբ և կիրառմամբ բարձրացնել դպրոցի մանկավարժների համակարգչային գիտելիքները և հմտությունները: Անհրաժեշտ է դպրոցը համալրել նոր համակարգիչներով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, դպրոցն ապահովել որակյալ ինտերնետ կապով:

Ինչպես նաև բնագիտական և մյուս առարկաների դասերին համակարգիչը դարձնել անհրաժեշտություն: Ուսումնասիրել և օգտագործել այլ դպրոցների առաջավոր փորձը:

4. Կարևորել ուսումնադաստիարակչական աշխատանքներ կատարելիս աշակերտների՝ որպես անհատականությունների, հայրենասիրության, մարդասիրության, հանդուրժողականության ձևավորմանը, ցանկացած խնդրի դեպքում սեփական կարծիքի արտահայտման կարողությունը:

Դպրոցում միջոցառումների կազմակերպումը (հոբելյարներ, էքսկուրսիաներ, գրական և գիտական զեկույցներ, մրցույթներ) ևս ուղղել նշված խնդիրների լուծմանը:

5. Աշխատել դպրոցական և հասարակական մյուս օղակների հետ համատեղ, կազմակերպել հրատապ հարցերի քննարկումներ և հիմնավորել ընդունելի որոշումները: Կառավարման խորհրդին ներգրավել մանկավարժներին և՛ խրախուսման, և՛ տույժերի նշանակման գործում: Ծնողների ակտիվ մասնակցությունն ապահովել դպրոցական կյանքի բոլոր ոլորտներում:

6. Հասնել սովորողների անհարգելի բացակայությունների նվազագույն մակարդակի: Ծնողների և համայնքի հետ համատեղ աշխատանքով բացառել դպրոցից աշակերտների դուրս մնալու դեպքերը:

7. Քննություններից առաջ՝ փետրվար, մարտ ամիսներին, ավարտական դասարանների աշակերտներին ծանոթացնել ավարտական ու միասնական քննությունների թեստերի նմուշներին, քննությունների անցկացման կարգին: Դպրոցում անցկացնել փորձնական քննություններ ու ստուգումներ: Ծնողների հետ համատեղ սովորողներին տեղափոխել քննական կենտրոններ:

8. Ապահովել դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները, սովորողների աշխատանքների ու հանգստի զուգակցումը, առողջության պահպանումը:

9. Հատուկ ուշադրություն հրավիրել տղաների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ֆիզիկական կոփվածքին, ռազմական գործի հիմունքների լավ տիրապետմանը ու Հայոց բանակում ծառայության նախապատրաստմանը:

10. Դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար փնտրել ֆինանսական միջոցներ (բարերարներ, համայնք, ծնողներ և այլն): Նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և ներկայացուցիչների հետ:

11. Ապահովել դպրոցի մասնակցությունը մարզային կենտրոնացված միջոցառումներին (օլիմպիադաներ, մրցույթներ և այլն):

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Առանձնահատուկ մոտեցում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, ազգային հենքով ու ավանդույթներով ուսուցում ու դաստիարակություն, ժողովրդավարական աշխատառճ, ազատ արտահայտվելու հնարավորություն, քննադատական մոտեցում, ուսուցիչ-աշակերտ ճիշտ փոխհարաբերություն, առողջ կոլեկտիվ, ազատ արտահայտվելու կարողություն, համախմբվածություն, ԲՈՒՀ ընդունվողների բարձր ցուցանիշ:	Առարկայական օլիմպիադաների քիչ մասնակցություն պակաս թվով աշակերտների, տարակարգ չունեցող ուսուցիչներ, լաբորատոր սարքերի, նյութերի և առարկայական կաբինետների պակաս, համակարգչային տեխնիկայի անհրաժեշտություն, մարզագույքով հագեցած մարզադահլիճ, աուդիո սարքեր:

Դպրոցում տիրող իրավիճակի վերլուծությունն իրականացնելիս կարևորվում է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, դրանց վարումը (նորմատիվ փաստաթղթեր):

Դպրոցում առկա է պարտադիր գործունեություն. երաշխավորված փաստաթղթերը և դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը:

1. Աշակերտի անձնական գործ
2. Աշակերտական շարժի մատյան
3. Ատեստատների բաշխման մատյան

4. Վկայականների բաշխման մատյան
5. Աշխատողների հրամանագիրք
6. Աշակերտների հրամանագիրք
7. Աշխատողի անձնական գործ
8. Դպրոցի կառավարման խորհրդի արձանագրությունների մատյան
9. Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
10. Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների մատյան
11. Տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյան
12. Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան
13. Սովորողի տեղափոխման թերթիկ
14. Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյան

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերլուծության արդյունքում բացահայտվեցին հիմնախնդիրները.

1. Թարմացնել համակարգիչները
2. Լուծել դպրոցի և մարզադահլիճի ջեռուցման հարցը
3. Նվազեցնել 9-րդ դասարանից աշակերտների արտահոսքը
4. Դպրոցի զարգացման ուղղությունները, ակնկալվող արդյունքները:

ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները սահմանվում են 5-ամյա ռազմավարությամբ, որը հիմք է հանդիսանում դպրոցի առկա իրավիճակից բխող նպատակների և խնդիրների սահմանման համար:

Դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները բովանդակում են՝

1. Հանրակրթության օրենսդրությամբ կրթական պետական ծրագրերով ուսումնական հաստատության գործունեության իրականացում:
2. Սահմանել ուսումնական գործընթացի նպատակները և ապահովել աշխատանքային պլանի համապատասխանությունն այդ նպատակներին:
3. Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացներ դպրոցում փորձառու ուսուցիչների կամ հրավիրված մասնագետների կողմից:
4. Կազմակերպել ուսուցիչների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կրառման հմտությունների զարգացման դասընթացներ դպրոցում փորձառու ուսուցիչների կամ հրավիրված մասնագետների կողմից:
5. Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հենքի՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:
6. Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, ծառայի անհատին և ժողովրդին:
7. Հանրակրթությունն իրականացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Դպրոցի կրթական քաղաքականության նորմատիվային ամրակայում հիմնարար կրթական ծրագրի ձևով,
2. Ուսումնական պլանի համակարգված մեթոդական և դիդակտիկ ապահովվածություն,
3. Մանկավարժների մասնագիտական որակների բարձրացում,
4. Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում
5. Դպրոցի տնօրենի և հաշվապահի կարողությունների զարգացում՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները՝ կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար:
6. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում:
7. Դպրոցում համապատասխան կրթադաստիարակչական միջավայրի ստեղծումը կնպաստի երեխաների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:

ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Դպրոցն արդեն իսկ ձեռնարկել է անհրաժեշտ միջոցառումները համացանցային միջավայրի ու տեղեկատվական տեխնոլոգիաների առկայության ապահովման համար: Դպրոցն ունի իր պաշտոնական կայքը՝ www.dashtadem.schoolsite.am, որտեղ պարբերաբար տեղադրվում են դպրոցում կատարված բազմաբնույթ միջոցառումների և դպրոցի անցուդարձի վերաբերյալ նյութեր:

Հաշվի առնելով ներկայումս համացանցի և սոցիալական կայքերի էական դերակատարումը հասարակության կյանքում, դպրոցի վերաբերյալ համացանցում

պարբերաբար պետք է տեղադրվեն դպրոցի գործունեության և աշակերտների առաջադիմության վերաբերյալ հաշվետվություններ:

Դպրոցի զարգացման հետագա տարիներին ուսումնական գործընթացն արդյունավետորեն կազմակերպելու համար անհրաժեշտ է բարձրացնել համակարգչայնացման մակարդակը, մասնավորապես.

1. Ավելացնել համակարգիչների քանակը, ձեռք բերել ինտերակտիվ գրատախտակ և այլ սարքավորումներ
2. Բարձրացնել աշակերտների դասապրոցեսում համակարգիչների և համացանցային ռեսուրսների կիրառելիության մակարդակը
3. Բարելավել «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման որակը:
4. Ներդնել հետաքրքրաշարժ և նորարար ուսումնական մեթոդներ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:
5. Մշակել և ավելացնել ժամանակակից էլեկտրոնային ուսումնական նյութեր
6. Ընդլայնել ուսումնական գործընթացում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառում:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

Նոր սերնդին բարձրորակ կրթություն տալու նպատակով պետք է օգտագործել կազմակերպման ժամանակակից լավագույն եղանակները, ստեղծել ազգային դպրոցի նոր տարբերակ՝ դրա ձևավորման հիմքում դնելով մի քանի պարտադիր սկզբունքներ: Մասնավորապես, սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, սեր ուսման և աշխատանքի նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ, ինչպես նաև հավատ ապագայի հանդեպ: Աշակերտների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է նաև ապահովել.

1. Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա:

2. Ուսուցման կազմակերպում և զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
3. Աշակերտների իրավունքների առավելագույնս ապահովում և պահպանում պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:
4. Աշակերտների համար ստեղծված առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավում:
5. Մրցունակ և բանիմաց շրջանավարտների պատրաստում՝ շուկայական պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով ներառական կրթության ներդրման հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրված քաղաքականությունը՝ անհրաժեշտ է դպրոցում սերմանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համակարգված պրոֆեսիոնալ աջակցություն ցուցաբերելու գիտակցություն, ինչպես նաև ստեղծել ուսուցման համար անհրաժեշտ տարրական պայմանները:

Լուծել ներառական կրթության մատուցման համար անհրաժեշտ մասնագետների ներգրավման հարցը՝ դպրոցում ներառական կրթության ներդրման պահից:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Գտնել հովանավորներ, բարերարներ՝ լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու նպատակով:

Դպրոցի նյութատեխնիկական բազան անհրաժեշտ է հարստացնել և արդիականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

- Համակարգչային կաբինետի համլրում նոր համակարգիչներով և այլ անհրաժեշտ տեխնիկայով
- Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում

- Անհրաժեշտ ֆիզիկական ակտիվության ապահովման համար սպորտգույքի ձեռքբերում և այլն:

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվի առնելով դպրոցի շենքային պայմանների առաջացրած խնդիրներն՝ աշակերտների կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում խիստ անհրաժեշտ է.

1. Դպրոցը ջեռուցման համակարգով ապահովելը
2. Դպրոցի 1-ին հարկի վերանորոգումը՝ միջանցքի և դասասենյակների վերանորոգումը
3. Սանհանգույցների մասնակի վերանորոգումը

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ա) Կառավարման խորհուրդ

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը՝ ներգրավելով նրան վերահսկողական գործընթացում:

Մասնավորապես՝

1. Իրականացնել ֆինանսական եռամսյակային հաշվետվությունների քննարկում
2. Իրականացնել բյուջեի առավելագույնս ճշգրիտ պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը:
3. Դպրոցի ջեռուցման հարցը միշտ պահել վերին ատյանների ուշադրության կենտրոնում:
4. Դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել կրթության պետական կառավարման մարմնին, լիազորված մարմնին:

5. Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար:

բ) Ծնողական խորհուրդ

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ծնողների կողմից որակյալ թության նկատմամբ պահանջի ձևավորմանը, քանի որ աշակերտների կրթության ւրգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Առաջին հերթին պետք է պահովել, որ ծնողն ինքը շահագրգռված լինի դպրոցում որակյալ կրթություն ւանալու համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ:

Նշված ուղղությամբ ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ւժանանալ ծնողների վստահությանն ու հարգանքին: Ծնողների մոտ անհրաժեշտ է րմանել հետևյալ կարգախոսը. «Բաց դաս, թե՝ ծնողական ժողով, ցերեկույթ, թե՝ բաթօրյակ, մրցույթ, թե՝ արշավ, մեր ծնողն ամեն տեղ է»: Բացի այդ կարևոր է նաև ողներին մասնակից դարձնել դպրոցում ձևավորված ավանդույթներին և որույթներին:

Պետք է նշել սակայն, որ մեր օրերում ծնողական խորհուրդը հիմնականում ական բնույթ է կրում և ակտիվորեն չի մասնակցում դպրոցի կառավարման րձընթացին: Խնդրին լուծում տալու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ ջոցառումները.

ա) կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար՝ րկայացնելով դպրոցի գործունեության վիճակն ու հեռանկարային ծրագրերը, ւումնադաստիարակչական աշխատանքները, լսել և քննարկել նրանց հետաքրքող ւրցերը:

բ) ծնողներին պետք է մասնակից դարձնել աշակերտների ուսուցման, տադպրոցական և արտադասարանական դաստիարակության գործընթացին, ւումնական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով բանիմաց և իրենց խատանքային ոլորտներում հաջողություններ գրանցած ծնողների:

գ) պետք է ծնողներին ապահովել համապատասխան տեղեկատվությամբ, զմակերպել անհրաժեշտ խորհրդատվություններ: Մասնավորապես, անհրաժեշտ դպրոցի գրադարանում ստեղծել «Դո՛ւ, սիրելի՛ ծնող, քո երեխայի առաջին ուցիչն ես» խորագրով գեղեցիկ ձևավորված անկյուն, որտեղ տեղադրված կլինի ;խայի դաստիարակության և դպրոցին ու կյանքին նախապատրաստելու

հանրամատչելի գրականություն՝ այդ բնագավառի ամենաթարմ նորություններով և խորհուրդներով:

դ) բոլոր ծնողները չեն, որ տիրապետում են երեխայի դաստիարակության և նախնական ուսուցման նորություններին և հատուկ մանկավարժական մեթոդներին: Նրանց օգնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները.

- ծանոթացնել երեխայի խնդրին
- միասին սահմանել խնդիրը
- միասին գտնել խնդրի լուծման ուղիները
- գնահատել սպասվող արդյունքները
- ընտրել և կիրառել խնդրի լուծման առավել խելացի տարբերակը
- գնահատել փաստացի արդյունքները

ե) ծնողների համար կազմակերպել միջոցառումներ «Լավագույն ընտանիք», «Մեր մեծերը», «Մայրենին սիրող մայրեր» թեմաներով կինոդիտումներ և հանդիպումներ:

Այս ամբողջ գործունեությունը կնպաստի դպրոցի նկատմամբ վերահսկողական օղակի ձևավորմանը, կամրապնդվի դպրոց-ծնող կապը, ինչն իր հերթին կնպաստի հասարակության մեջ ուսուցչի բարի համբավի վերականգնմանը:

Գ) Աշակերտական խորհուրդ

Աշակերտների ինքնավստահության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Պետք է նպաստել, որ նրանք մասնակցեն դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը: Դպրոցում կայացած աշակերտական խորհուրդը կնպաստի երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանն ու զարգացմանը:

Քանի որ աշակերտը որակյալ կրթության պահանջատերն է, պետք է լսել նրա կարծիքը դասավանդման բովանդակության մշակման, աշակերտների գիտելիքների որակի, նրանց վարքի ու կարգապահության բարելավման նպատակով:

Աշակերտական ինքնավստահության միջոցով ապահովել աշակերտների կրթություն ստանալու իրավունքը և ինքնակրթության ապահովումը: Ամրապնդել

աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք կապերը և պայմաններ ստեղծել, նպաստել դրանց համակողմանի զարգացմանը:

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

Դպրոցի զարգացման ծրագիրն անշուշտ ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր: Դպրոցի ներկայիս ֆինանսավորումը հիմնականում բավականացնում է աշխատավարձի, հարկերի, կոմունալ, գրենական պիտույքների ձեռքբերմանը և տնտեսական ծախսերի վճարմանը: Շատ հաճախ դպրոցի խնդիրներն առաջանում են հենց ոչ բավարար ֆինանսական միջոցների առկայությունից: Ուստի անհրաժեշտ է առկա միջոցների պայմաններում ճիշտ կողմնորոշվել և կատարել իրատեսական պլանավորում՝ հստակ պատկերացնելով ռեսուրսների օգտագործման մեխանիզմները և հնարավորությունները: Բյուջեի նախահաշիվը կազմելիս անհրաժեշտ է նաև հավանություն ստանալ խորհրդի և հիմնադրի կողմից:

Ինչպես հայտնի է, դպրոցի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հիմնական /ընդհանուր/ ծրագրի՝ կախված աշակերտների թվից: Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով.

ա) իրականացնել արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր,

բ) իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ (կամ) այլընտրանքային ծրագրեր,

գ) ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Ֆինանսական լրացուցիչ աղբյուրներ ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել արտաբյուջե, որի ֆինանսական մուտքերի ձևավորման համար կպահանջվի.

ա) կազմակերպել վճարովի կրթական ծառայություններ,

բ) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ օրենքով սահմանված կարգով (ավագ դասարաններում ստեղծելով արհեստագործական խմբակներ)

գ) դիմել համայնքի գործարարներին, դպրոցի հաջողակ շրջանավարտներին, անհատ բարեգործներին:

Բյուջեից տնտեսված և արտաբյուջետային գումարներն անհրաժեշտ է նպատակաուղղել.

- դպրոցի ջեռուցման համակարգով ապահովմանը
- դպրոցի մասնակի, ընթացիկ վերանորոգմանը
- համակարգչային սենյակի կահավորմանը, նոր համակարգիչների ձեռքբերմանը
- էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերմանը
- պրոյեկտորի ձեռքբերմանը

Դպրոցի արտաբյուջետային միջոցները պետք է պահվեն բանկային հատուկ հաշվում և ծախսվեն կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

Յուրաքանչյուր տարի, մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ամփոփել նախորդ տարվա կատարած ֆինանսական ծախսերը՝ ապահովել միջոցների ծախսման թափանցիկությունը:

ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող անցանկալի գործոններն են: Հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ առանց լավ մշակված ռիսկերի գնահատման ու կառավարման գործընթացի դպրոցի զարգացման ծրագիրը դժվար է իրականացնել:

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացում առկա հիմնական ռիսկերը հետևյալն են.

№	*Ռիսկերը*	*Ռիսկերի նվազեցման ուղղված գործողությունները*
1	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական	Մանկավարժների վերապատրաստումների ապահովում՝

	պատրաստվածության մակարդակի խոչընդոտների առկայություն	մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով
2	Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, հովանավորների և բարերարների ներգրավում
3	Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն	Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում, լրացուցիչ միջոցների հայթայթում
4	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության պասիվություն	Հանդիպումների, սեմինարների կազմակերպում ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը
5	Դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքների դադարեցում	Համապատասխան գերատեսչական մարմինների մոտ ֆինանսական միջոցներ տրամադրելու խնդրի համաձայնեցում՝ անհրաժեշտ ֆինանսավորման ներգրավման նպատակով

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության՝ առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն իրականացված միջոցառումների կատարողականները: Ցուցանիշներն ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: Նշված ցուցանիշների միջոցով պետք է իրականացվի նաև դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող և վերահսկող շահառուների (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները) դպրոցի զարգացման գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանի գնահատումը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմ, որի համաձայն ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից են դառնում վարչական և մանկավարժական աշխատողները, աշակերտները և ծնողները: Արտաքին գնահատումը կատարվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ընտրված արտաքին գնահատում իրականացնող անկախ կազմակերպության կողմից: Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն անհրաժեշտ է ուղղորդել աշակերտին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներն են.

1. Դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն երկու անգամ դպրոցի տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:
2. Դպրոցի խորհրդի կողմից խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը տնօրենին:
3. Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:
4. Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ աշակերտը, աշակերտի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողներ, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները: Վերջիններս դպրոցի կառավարումը կդարձնեն ավելի թափանցիկ ու արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը: